

կօչիկները⁽⁶⁸⁾ : 1701ին Tournefort Փրանսացին Էջմիածին իր այցելութեան՝ կը վկայէ որ «եկեղեցիին սալալատակը եւ դասը ծածկուած էր ընտիր գորգերով»⁽⁶⁹⁾ : Գորգին եկեղեցիին մէջ գոյութեան վկայութիւններու շարքը դրեթէ անսպառ է, եւ մեծ մասամբ օտար ուղեգիրներու այս վկայութիւններն իսկ կը սաստկացնեն այն վատ տպաւորութիւնը՝ որ կը թողու հայ եկեղեցիներու ունեցած ալժմու խեղճ գորգերու թափթփուքները, հնութենէ զուրկ, արժէքէ զուրկ : Թէ ի՞նչ եղած են եկեղեցական հին հայ գորգերը, դժուար չէ երեւակայել : Անոնք անխնամ գործածուած են, եւ այսպէս մաշելէ, քայքայուելէ վերջ՝ իբր հին քուրջ նետուած, իբր անգիրտաց անպէտ : Մաս մըն ալ Մահմետական աւարառութեանց ենթակայ՝ կորսուած, իսկ քիչ թուով ալ ծախուած կամ փոխուած :

Վկայութիւններու այս շարքը ամբողջացնելու համար հոս կ'աւելցնեմ նաեւ ԺԹ դարու վկայութիւններ : 1817ին՝ ռուսական դեսպան Էրմոլով ղէպի Պարսկաստան իր ճամբուն վրայ կը հանդիպի Էջմիածին՝ եւ ներկայ կ'ըլլայ եկեղեցական արարողութեան, ուր ի պատիւ իրեն գորգ մը սփռուած էր, սակայն յարգանքի համար գորգին վրայ չի կենար⁽⁷⁰⁾ : 1829ին Էջմիածին եւ Արարատները այցելող Dr. Friedrich Parrot կը գրէ թէ «Շահ Զատայի այցելութեան առթիւ (Էջմիածին), ան երբեք եկեղեցի չէր մտնէր առանց իր կօչիկները հանելու եւ դրան մօտ ձգելու, եւ իրեն համար ճոխ գորգ մը սփռել տալու»⁽⁷¹⁾ : Dr. Friedrich Parrot կը վկայէ նաեւ թէ Էջմիածին իր ընդունելութեան առեն՝ կը նկատէ որ իրենց սպասարկողները՝ կօչիկներն հանելով դրան մօտ կը ձգէին եւ յետոյ ներս կը մտնէին՝ սենեակին մէջ շատ կամաց քալելով «ուր գորգով մը ծածկուած էր»⁽⁷²⁾ : Էջմիածնի մէջ իրենց յատկացուած սենեակը կը կահաւորուի ննջելու համար «գորգերով, բազմոցներով, բարձերով եւ վերմակներով»⁽⁷³⁾ : Իսկ Ս. տաճարը զարդարուած էր գորգերով⁽⁷⁴⁾ : 1830ական թուականներուն՝ երկու ամերիկացի քարոզիչներ, Eli Smith եւ H. G. O. Dwight կը վկայեն որ Էջմիածնի տաճարին դասը «ծածկուած էր գորգերով, որոնցմէ ոմանք իրենց նրբութեամբ եւ ճոխութեամբ կ'անցնէին որեւէ նկարագրութիւն»⁽⁷⁵⁾ : Իրենք կը հիւրասիրուին եպիսկոպոսի մը խուցը, որուն «գետինը կը ծածկէր լաւ գորգ մը»⁽⁷⁶⁾ : Իսկ Փետրուար 13/25ին Աղբաղի նախկին Իսրայէլ-Եպիսկոպոսը զիրենք Թաւրիղի եկեղեցին կը հրաւիրէ, ուր եպիսկոպոսին գահին առջեւ «ճոխ գորգ

(68) Gemelli Carreri եւ Melchisedeck Thevenot գրած են այսպիսի յերիւրածոյ ուղեգրութիւններ, սակայն իրենց գործերը կը մնան նշանաւոր :

(69) Voyage into the Levant. — London, 1741, vol. III, p. 170.

(70) Travels in Russia. — Robert Lyall, London, 1825, Vol. II, p. 95.

(71) Jourey to Ararat. — London, 1845, p. 86.

(72) Անդ, էջ 95 :

(73) Անդ, էջ 96 :

(74) Անդ, էջ 99 :

(75) Missionary Researches in Arminia. — London, 1834, p. 283.

(76) Անդ, էջ 293 :